Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ

Ընդամենը ինը հոգի էին հայազգի այն վարդապետները, որոնք հալածանքներից մազապուրծ, իրենց քառասներկուամյա առաջնորդի՝ Մխիթար, որդի Պետրոսի Սեբաստացու ղեկավարությամբ, 1717 թվականի աշնանը հաստատվեցին Վենետկից հարավ գտնվող Սուրբ Ղազար կղզում: Միաբանությունը, որը սկզբում ուներ «Որդեգիր կուսին, վարդապետ ապաշխարության» անվանումը, ոչնչով հայտնի չէր, նրա ծավալելիք գործունեության մասին հակասական և անորոշ կարծիքներ կային, և զարմանալի չէր, որ Վատիկանի կարդինալների խորհուրդը նրանց պետք է հատկացներ հենց Սուրբ Ղազարը՝ անշուք մի կղզի, որը շուրջ երկու դար եղել էր բորոտների կայան, ուներ ընդամենը մեկ ջրհոր ու մի խարխուլ աղոթատուն, և այդ ժամանակ կատարելապես անտեր էր ու անբնակ:

Այս աննախանձելի սկիզբը, սակայն, նպատակի անորոշություն չէր ենթադրում: Մխիթար Սեբաստացին շատ որոշակի և հեռահար պլան ուներ, որը նրա համար ուղեցույց-նպատակ էր դեռ վաղուց, և իրականացնելու համար նա ի սպաս էր դրել ամեն ինչ, ընդհուպ իր կյանքն ու առողջությունը՝ ստեղծել մի միաբանություն, որը պետք է զբաղվեր հայագիտական, բանասիրական, բառարանագրական, թարգմանչական և գեղարվեստական գրականությամբ, այսինքն՝ իր բառով ասած հայկաբանությամբ, և այդ անել ազգային աղքատ գիր-գրականությանը զարկ տալու, ազգը լուսավորելու համար: Եվ Մխիթարի գրական ժառանգությունը գալիս է հենց այս ապացուցելու: Նա աստվածաբան-բանասեր է և ունի «Խոկումն վարուց» (Պոլիս, 1705 թ.), «Կրթութիւն աղօթից» (Վենետիկ, 1718 թ.) և այս բնույթի այլ աշխատություններ, նա գրաբարի և աշխարհաբարի քերական-լեզվագետ է և հեղինակ է «Դուռն քերականության աշխարհաբար լեզվին հայոց» (Վենետիկ, 1727 թ.), «Քերականություն գրաբար լեզվի հայկազյան սեռի» (Անդ, 1730 թ.) աշխատությունների, նա հմուտ բառարանագիր է, որի կազմած «Բառգիրք հայկազնյան լեզվի» երկհատոր վիթխարի աշխատությունը (Վենետիկ 1749 և 1769 թթ.) ուշագրավ է առ այսօր: Նա թարգմանություններ է անում լատիներեն ու ֆրանսերեն լեզուներից, որոնք, ի դեպ, սովորել էր ինքնակրթությամբ: Մխիթարը նաև ինքնատիպ բանաստեղծ էր, որի չափածո ստեղծագործությունների «Տաղարան» խորագիրը կրող ժողովածուն 1727 թ. Վենետիկում հրատարակվելուց հետո, երկու վերահրատարակություն ունեցավ:

Եվ Սեբաստացու հաջորդները նրա գրական-հայագիտական գործը շարունակելու տեսակետից շատ օրինակելի եղան: Նրանք ոչ միայն սրբությամբ ընդունեցին միաբանության հիմնադրի գրական մշակութային ավանդույթները, այլև անվերապահորեն զարգացրեցին ու խորացրեցին դրանք, բարձրացնելով նոր ու բարձր աստիճանի: Եվ այստեղ էր, որ Մխիթարյանները լիուլի դրսևորեցին իրենց և տվեցին մեկից ավելի այն բարձրարժեք գործերը, որոնք անառարկելի հեղինակություն են մնում առ այսօր: 1789 թվականին հրատարակված Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը և 1793 թ. լույս տեսած Ղազար Փարպեցու «Պատմություն հայոցը», որն իր հետ ուներ նաև «Թուղթ մեղադրութեան ստախոս աբեղայից» հանրահայտ բողոքը, գեղեցիկ կերպով վկայում էին Մխիթարյանների նախասիրությունների մասին և ցույց էին տալիս, որ վերջիններս հիմնավորապես սկսել են զբաղվել հայ պատմիչների մեծ ու փոքր բնագրերի մասսայական հրատարակությամբ: Գործը կանոնավոր հիմքերի վրա դրվեց 1807 թվականից, երբ ստեղծվեց «Ընտիր մատենագիրք» և սրա ավելի մատչելի տարբերակը հանդիսացող «Մատենագրություն նախնյաց» մատենաշարերը և իրար հետևից սկսեցին լույս տեսնել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» (Վենետիկ, 1826 թ.), Մովսես Խորենացու «Պատմություն հայոցը» (Անդ, 1827), Եղիշեի «Պատմութիւն Վարդանանցն» ու «Ճառ յաղագս միանձանցը» (մեկ գրքով, անդ, 1828

թ.), Ներսես Շնորհալու գործերի «Մատենագրութիւնք» խորագիրը կրող ստվար ժողովածուն (Անդ, 1830 թ.), Փավստոս Բյուզանդի «Պատմութիւն հայոցը» (Անդ) և այլն։ Այս և մյուս բոլոր հրատարակություններն անփոփոխ կերպով ունենում էին իրենց մասնագիտական առաջաբանը, որտեղ կազմողը հանգամանորեն նշում էր ձեռքի տակ եղած ձեռագրերի քանակը, դրանցից որն է հիմք հանդիսացել հրատարակության համար, տողատակերում տրվում էր ձեռագրերի ընթերցվածային տարբերությունները, իսկ վերջում զետեղվում էր տվյալ գործում պատահող տեղանունների ու անձնանունների ընդարձակ ցանկը։ Այսօրվա հասկացողությամբ՝ քննական բնագրերի հրատարակություններ էին դրանք, իհարկե, արված իր ժամանակի բանասիրության մակարդակով ու այդ բանասիրության պահանջների համաձայն, որն իրենք՝ Մխիթարյանները սովորել էին եվրոպացիներից և այն համարձակորեն ներդրեցին հայկական մատենագիտության անդաստանը։

1772 թվականին Ստեփաննոս Մելգոնյանի (1717-1799) աբբահայրության ժամանակ Մխիթարյան միաբանության անդամների մեջ վեճ ծագեց կանոնադրության փոփոխման կապակցությամբ և միաբանների մի խումբ՝ Աստվածատուր Բաբիկյանի (1738-1825) գլխավորությամբ, թողնելով Վենետիկը, հաստատվեց Տրիեստում՝ 1773 թվականին, որից հետո՝ Վիեննայում՝ 1811-ին։ 1811 թ. հունիսի 8-ին Ավստրիայի կառավարությունը պաշտոնապես ճանաչեց նրանց գոյությունը և այսպիսով իր գոյությունը սկսեց Մխիթարյան միաբանության Վիեննայի ճյուղը։ Սկզբնական շրջանում Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների միջև սառը-պաշտոնական հարաբերություններ էին տիրում, բայց հետագայում, այդ հարաբերությունները աստիճանաբար բնականոն հունի մեջ ընկան։ «Միևնույն պտղե սերյալ երկու քույր միաբանություններ», – այսպիսի բնութագրական տվեցին հաջորդները նրանց, և այդ «ընթացքը» շարունակվում է առ այսօր։

18-րդ դարի երկրորդ կեսից սկսած, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը վերելք ապրեց։ Ժամանակի առաջնակարգ մշակութային ու գիտական գործիչներ Գաբրիել Ավետիքյանի (1750-1827), Միքայել Չամչյանի (1738-1823), Մկրտիչ և Հարություն Ավգերյան եղբայրների, Ղուկաս Ինճիճյանի (1758-1833), Մանվել Ջախջախյանի (1771-1835) և ուրիշների գործունեության շնորհիվ հիշյալ ժամանակահատվածում ստեղծված գործերից հատկապես մեծարժեք էին Միքայել Չամչյանի եռահատոր «Պատմություն հայոց»-ը, Մկրտիչ Ավգերյանի 12 հատորանոց «Լիակատար վարք և վկայաբանությունքը», Ղուկաս Ինճիճյանի 8 հատորանոց «Դարապատումը», Ստեփաննոս Ադոնցի և Ղուկաս Ինճիճյանի համատեղ հեղինակություն հանդիսացող 11 հատորանոց «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» աշխատությունը։

19-րդ դարը մի ուրիշ նշանավոր իրադարձություն էլ բերեց Վենետիկի Մխիթարյանների կյանքում։ Երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո, 1843 թվականին սկսեց հրատարակվել նրանց ամսագիրը՝ «Բազմավեպ» խորագրով, այսինքն՝ «բազում բաներ վիպող»։ Սկզբնական շրջանում հայազգի ընթերցողների մոտ ճանաչվելու ու տարածվելու նպատակով «Բազմավեպը» հոդվածներ էր տպում ամենատարբեր նյութերի մասին, սկսած ընտանեկան-կենցաղային բնույթի խորհուրդներից մինչև գրականագիտական-տեսական հարցերը։ Սակայն հետագայում, հիմնականում վաթսունական թվականներից սկսած, պարբերականն ընդունեց հայագիտական-բանասիրական բնույթ և այդպես էլ հրատարակվում է առ այսօր։

Իրենց գործունեությամբ չէին թերանում նաև Վիեննայի Մխիթարյանները։ Նրանք ևս սկզբնական շրջանում իրենց գործունեությունն սկսեցին կրոնա-աստվածաբանական բնույթի գործերի հրատարակմամբ, բայց հետագայում, արդեն վճռականորեն սկսեցին զբաղվել հայագիտական-բանասիրական աշխատությունները։ Այս առիթով հիշատակության արժանի են

Հովսեփ Գաթըրճյանի «Տիեզերական պատմություն ի սկզբանե աշխարհի մինչև ցմեր ժամանակս» երկհատոր աշխատությունը, Ղևոնդ Հովնանյանի «Պատմություն քաղաքականության եվրոպական տերությանց ընդհանրապես» քառահատոր գործը, Արսեն Այտընյանի «Քննական քերականություն» լեզվագիտական ծանրակշիռ ուսումնասիրությունը և բազում ուրիշ գործեր։ Հետևելով իրենց քույր միաբանության օրինակին, Վիեննայի Մխիթարյանները 1887 թվականից սկսած, սկսեցին հրատարակել իրենց ամսագիրը՝ «Հանդես Ամսօրյա» անունով, որը գոյատևում է առ այսօր։

Ոչ քիչ թվով գործեր տվեցին Վիեննայի Մխիթարյանները նաև գեղարվեստական գրականության ասպարեզում։ Սերովբե Տերվիշյանի «Այրի մայրը և միամոր որդյակը», Կղեմես Սիպիլյանի «Տրդատա առանձնանալը, վերջին օրերը ու մեռնելը», Ս.Գաթըրճյանի «Տարվույն չորս եղանակները կամ նկարագիր սքանչելյաց բնության» արձակ գեղարվեստական ստեղծագործությունները ժամանակին ընդհանուր դրվատանքի արժանացան, իսկ Լաֆոնտենի, Ռասինի և այլոց գործերի՝ բնագրից կատարված թարգմանությունների գերակշիռ մասը չի հնացել առ այսօր։

Ներկայումս Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանների մշակութային գործունեությունը համեմատաբար փոքր բաժին ունի հայագիտության և, մանավանդ, հայ գեղարվեստական համընդհանուր զարգացման շղթայում։ Նրանց վերջին շրջանի գործերից հիշատակելի են Պողոս Անանյանի «Սեբեոսի պատմության գրքի մասին մի քանի լուսաբանություններ» (1973 թ.), Մեսրոպ Ճանաշյանի «Հ. Արսեն Ղազիկյան և իր թարգմանությունները» (1974 թ.), Լ.Զեքիյանի «Հայ թատրոնի սկզբնաքայլերը և հայ վերածնունդի շարժումը» (1975 թ.) աշխատությունները, բանաստեղծություններով ու պոեմներով շարունակում է հանդես գալ Վահան Հովհաննիսյանը, Վիեննայի Մխիթարյանները շարունակում են «Ազգային մատենադարան» արժեքավոր մատենաշարի հրատարակումը։ Երկու միաբանությունների ավագ ու տարեց անդամները հետաքրքիր բանասիրական հոդվածներով շարունակում են հանդես գալ «Բազմավեպում» և «Հանդես Ամսօրյա»-ում։

Հաղորդվել է ռադիոյով, 1987 թ. վերջերին։